



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

22 հունիսի 2021 թվականի թիվ 108- Ս

ք. Երևան

#### «ԱՆԳԵՂ ՏՎ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումների հիման վրա 2021 թվականի մայիսի 03-ին հարուցված թիվ 8 և 2021 թվականի մայիսի 14-ին հարուցված թիվ 9 վարչական վարույթների նյութերը՝ *պարզեց*.

2021 թվականի մայիսի 03-ին Հանձնաժողով մուտքագրված «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ընկերության և 2021 թվականի մայիսի 14-ին Հանձնաժողով մուտքագրված «ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության («ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ և «ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունների միասին հիշատակման դեպքում՝ դիստրիբյուտորներ) դիմումներում նշված են «ԱՆԳԵՂ ՏՎ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ցանցային օպերատոր) կողմից առանց պայմանագրերի վերահաղորդում իրականացնելու փաստի վերաբերյալ:

«ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ընկերությունը 2021 թվականի մայիսի 03-ին Հանձնաժողով մուտքագրված դիմումով տեղեկացրել է, որ հանդիսանում է թվով 28 տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորը, մասնավորապես՝ 1. «Setanta Sports Eurasia», 2. «Setanta Sports Eurasia Plus», 3. «Animal Planet», 4. «Discovery Channel», 5. «Discovery Science», 6. «DTX», 7. «Fine Living HD», 8. «Food Network HD», 9. «Investigation Discovery («ID XTRA»)», 10. «TLC», 11. «Travel Channel HD», 12. «Eurosport 1», 13. «Eurosport 1 HD», 14. «Eurosport 2», 15. «Eurosport 2 HD», 16. «PTP-Планета», 17. «Россия-К», 18. «Россия-24», 19. «TNT-Comedy», 20. «TNT4 International», 21. «Friday International», 22. «TB 3 International», 23. «HTB Сериал», 24. «HTB Право», 25. «HTB Стиль», 26. «Animal Planet HD», 27. «Discovery Channel HD», 28. «TLC HD» տեսալսողական ծրագրերի և այս տեղեկատվությունը ներառված է նաև Հանձնաժողովի պաշտոնական կայքում:

«ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ընկերության դիմումում նշվել է նաև, որ այս տեսալսողական ծրագրերը ՀՀ տարածքում վերահաղորդման իրավունքով տարածելու իրավունքը պատկանում է իրեն, սակայն ունենալով որոշ կասկածներ ցանցային օպերատորի կողմից՝ առանց պայմանագրի վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին,

համապատասխան տեղեկություն ստանալու նպատակով հարցում է ուղարկել Հանձնաժողով:

Հանձնաժողովը 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 04-326 գրությամբ տրամադրել է տեղեկություն՝ Հայաստանի Հանրապետությունում գործող ցանցային օպերատորների կողմից վերահաղորդվող այն տեսալսողական ծրագրերի մասին, որոնց դիստրիբյուտորը հանդիսանում է «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵԲԹ» ՍՊ ընկերությունը և ըստ այդ տեղեկության «ԱՆԳԵՂ ՏՎ» ՍՊ ընկերության կողմից վերահաղորդվում են «PTP-Планета», «Россия-24», «Setanta Sports 2», «Discovery Channel», «Animal Planet», «Eurosport» տեսալսողական ծրագրերը:

«ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵԲԹ» ՍՊ ընկերությունը դիմումով տեղեկացրել է նաև, որ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվող «PTP-Планета», «Россия-24», «Setanta Sports 2», «Discovery Channel», «Animal Planet», «Eurosport» տեսալսողական ծրագրերը, որևէ վերահաղորդման իրավունքով չի տրամադրվել վերջինիս, ավելին, նույնիսկ չի եղել ոչ ժամանակավոր թույլտվություն, ոչ էլ բանակցություններ ցանցային օպերատորի հետ նշված տեսալսողական ծրագրերի վերահաղորդման վերաբերյալ:

«ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունը 2021 թվականի մայիսի 14-ին Հանձնաժողով մուտքագրված դիմումով տեղեկացրել է, որ հանդիսանում է թվով 21 տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորը, մասնավորապես՝ 1. «НТВ-Мир», 2. «Детский мир», 3. «Иллюзион+», 4. «ЕвроКино», 5. «Муз-ТВ», 6. «Любимое кино», 7. «Мир сериала», 8. «Шансон ТВ», 9. «Охотник и рыболов SD» («Рыболов»), 10. «Animal Family HD» («В мире животных»), 11. «Телепутешествия HD» («Приключения HD»), 12. «Eureka», 13. «Зоо ТВ SD», 14. «Загородный SD», 15. «Телепутешествия SD», 16. «Охотник и рыболов HD», 17. «Тонус ТВ», 18. «Рыжий SD», 19. «Инсайт ТВ», 20. «Арсенал», 21. «Сиеста» տեսալսողական ծրագրերի և այս տեղեկատվությունը ներառված է նաև Հանձնաժողովի պաշտոնական կայքում:

«ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության դիմումում նշվել է նաև, որ նշված տեսալսողական ծրագրերը ՀՀ տարածքում վերահաղորդման իրավունքով տարածելու իրավունքը պատկանում է իրեն, սակայն ունենալով որոշ կասկածներ ցանցային օպերատորի կողմից՝ առանց պայմանագրի վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին, համապատասխան տեղեկություն ստանալու նպատակով հարցում է ուղարկել Հանձնաժողով:

Հանձնաժողովը 2021 թվականի ապրիլի 23-ի գրությամբ տրամադրել է տեղեկություն՝ Հայաստանի Հանրապետությունում գործող ցանցային օպերատորների կողմից վերահաղորդվող այն տեսալսողական ծրագրերի մասին, որոնց դիստրիբյուտորը հանդիսանում է «ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունը: Ըստ այդ տեղեկության «ԱՆԳԵՂ ՏՎ» ՍՊ ընկերության կողմից վերահաղորդվում են «Шансон ТВ», «НТВ-Мир», «Детский мир» տեսալսողական ծրագրերը:

«ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունը հայտնում է, որ ցանցային օպերատորի կողմից առանց համապատասխան իրավական հիմքերի (պայմանագրի) իրականացվում է իրեն պատկանող «Шансон ТВ», «НТВ-Мир», «Детский мир» տեսալսողական ծրագրերի վերահաղորդումը:

Դիստրիբյուտորները հայտնում են նաև, որ վերոնշյալ տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքով տարածելու իրավունքը ձեռք են բերել սովյալ տեսալսողական ծրագրերի իրավատերերի հետ կնքված պայմանագրերի հիման վրա և խնդրում են միջոցներ

ձեռնարկել դադարեցնելու առանց պայմանագրի տեսալսողական ծրագրերի անօրինական վերահաղորդումը:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով դիստրիբյուտորների դիմումները՝ 2021 թվականի մայիսի 03-ին և 2021 թվականի մայիսի 14-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել են համապատասխանաբար թիվ 8 և թիվ 9 վարչական վարույթները:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթների մասին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցերի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները և տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավական հիմքերը:

Հարուցված վարչական վարույթների ընթացքում ցանցային օպերատորի կողմից որևէ պարզաբանում, բացատրություն և տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավական հիմքեր Հանձնաժողով չի ներկայացվել:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 42-րդ հոդվածով, համաձայն որի՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2021 թվականի մայիսի 31-ի թիվ 15-Ս հրամանը՝ իրականացրել է ցանցային օպերատորի մոտ մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով:

Տեղում դիտարկում իրականացնելու արդյունքում 2021 թվականի հունիսի 01-ին Հանձնաժողովի կողմից կազմվել է «Օպերատորների գործունեության մշտադիտարկման (տեղում դիտարկում իրականացնելու միջոցով) իրականացման և արդյունքների վերաբերյալ» արձանագրություն, համաձայն որի՝ ժամը 17:00-17:15-ն ընկած ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում են «Шансон ТВ», «НТВ-Мир», «РТР-Планета», «Россия-24», «Setanta Sports 2», «Discovery Channel», «Animal Planet», «Eurosport տեսալսողական ծրագրերը, իսկ «Детский мир» տեսալսողական ծրագիրը չի վերահաղորդվում:

***Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.***

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Համաձայն «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի՝ Հանձնաժողովը՝ իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 18-րդ մասերը սահմանում են.

«1. Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Ուղղակի դիտարկման արդյունքները կարող են համադրվել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

3. Տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջների խախտման վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում օպերատորի գործունեության տեղում դիտարկումն իրականացվում է կարգավորող պետական մարմնի նախագահի հրամանի հիման վրա:

18. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց»:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթների մասնակիցների կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի տեղում դիտարկման արդյունքներին և հայտնի է դարձել, որ ցանցային օպերատորն իր գործունեությունն իրականացնում է՝ խախտելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Այսպիսով, վարչական վարույթների նյութերի ուսումնասիրության արդյունքում ամրագրում ենք, որ համաձայն «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

Փաստում ենք նաև, որ լիցենզիա ստացած ցանցային օպերատորը վերահաղորդում է տեսալսողական ծրագրեր և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Ցանցային օպերատորը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և ցանցային օպերատորը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում ցանցային օպերատորը պարտավոր էր պահպանել Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթի պահանջը:

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստը, որ ցանցային օպերատորի և դիստրիբյուտորների միջև չկան կնքված տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքի տրամադրման պայմանագրեր, իսկ տեղում դիտարկման արդյունքում էլ պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում են «Шансон ТВ», «НТВ-Мир», «РТР-Планета», «Россия-24», «Setanta Sports 2», «Discovery Channel», «Animal Planet», «Eurosport»

տեսալսողական ծրագրերը, ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ խախտվել է Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է.

«Ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրի վերահադորդում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.04 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:»

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերով, 49-րդ հոդվածի 1-ին մասով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

1. «ԱՆԳԵՂ-ՏՎ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Տ. ՀԱԿՈՒԹՅԱՆ**

22 հունիսի 2021թ.

ք. Երևան